Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2015 թվական, հունվարի 29, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Շամամ Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Էմիլ Տարասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Բորիս Խառատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Կարինե Ալոյան	«Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի և ԶԼՄ-ների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ-սոցիալական գործընկերության հարցերով փորձագետ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի տարածքային միության նախագահ

Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության «Տաքսի ծառայությունների ասոցիացիա» ճյուղային միության գործադիր տնօրեն
Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության «Արմենպակ» ճյուղային միության նախագահ

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Նարինե Բալայան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական
Գեղամ Իսրայելյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական
Թադևոս Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Գայանե Մանուկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Նորայր Բալայան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Հանձնաժողովի նախագահի կողմից հարց բարձրացվեց, թե արդյոք կան Հանձնաժողովի անդամներին նախապես ուղարկված նիստի օրակարգի նախագծի հետ կապված հարցեր կամ առաջարկներ:

Հանձնաժողովի անդամների կողմից նշվեց, որ օրակարգի նախագծի հետ կապված հարցեր չկան և առաջարկվեց հաստատել նիստի օրակարգը նախապես ուղարկված հարցերով.

1. **Հանրապետական եռակողմ կոլեկտիվ նոր պայմանագիր կնքելու մասին Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատանքային խմբի առաջարկությունների ներկայացում:**
2. **«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում:**
3. **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում և քննարկում:**

<u>1.</u> Հանրապետական եռակողմ կոլեկտիվ նոր պայմանագիր կնքելու մասին Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատանքային խմբի առաջարկությունների ներկայացում:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Սարգսյանը:

Նշվեց, որ Հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի նիստում կայացված որոշման համաձայն ձևավորվել է աշխատանքային խումբ, որի հանդիպման ժամանակ քննարկվել են Հանրապետական կոլեկտիվ նոր պայմանագրի կնքմանն առնչվող հարցեր:

Մասնավորապես նշվեց, որ քննարկվել են Հանրապետական կոլեկտիվ նոր պայմանագրում տնտեսական հարցերին, Հանձնաժողովի նախագահի իրավունքներին, լիազորություններին և գործառույթներին առնչվող բաժիններ ներառելու, ՀՀ վարչապետի կողմից Հանրապետական եռակողմ հանձնաժողովի նախագահելու, Հանձնաժողովի ռոտացիոն կարգով նախագահության, Հանձնաժողովին կից մշտապես գործող աշխատանքային խումբ (խմբեր) ունենալու, պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված նախագծերը ևս Հանձնաժողովում ներկայացնելու և քննարկելու հարցերը:

Քննարկման արդյունքում աշխատանքային խմբի կողմից առանձնացվել են Հանձնաժողովի նիստում ներկայացման ու քննարկման ենթակա հետևյալ հարցերը.

1. Հանձնաժողովը շարունակի նախագահել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը.
2. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում ներառել նաև տնտեսական հարցերին վերաբերող բաժին.
3. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում ներառել նաև Հանձնաժողովի նախագահի լիազորություններին, գործառույթներին առնչվող բաժին.
4. Վերանայել Հանձնաժողովի կազմը.
5. Կարգավորում տալ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի՝ հաստատված ցանկով փոխարինող ունենալու հարցին.
6. Հանձնաժողովի աշխատակարգում ամրագրել դրույթ, որի համաձայն Հանձնաժողովը կունենա մշտապես գործող աշխատանքային խումբ (խմբեր).
7. Հանձնաժողովի աշխատակարգում ներառել դրույթ, որի համաձայն՝ ՀՀ կառավարությունում իրավական ակտերի նախագծերի ներկայացման ժամանակ Հանձնաժողովի նախագահի կողմից հնչեցվի նաև Հանձնաժողովի կարծիքը,
8. Հանձնաժողովի որոշումները գրությամբ ուղարկել ՀՀ վարչապետին:

Ներկայացված առաջարկությունների 5-րդ կետի կապակցությամբ Հանձնաժողովի անդամ Ժ. Թորոսյանի կողմից հնչեցվեց կարծիք այն մասին, որ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի՝ հաստատված ցանկով փոխարինող ունենալու հարցի կարգավորումը ըստ էության չի նպաստի Հանձնաժողովի դերի բարձրացմանը, աշխատանքների ամրապնդմանը, այլ ընդհակառակը այն կխաթարի Հանձնաժողովի բնականոն աշխատանքին: Առաջարկվեց նաև, որ 7-րդ կետում ներկայացված առաջարկությունը իրացվի Հանրապետական կոլեկտիվ պայմանագրում:

Է. Տարասյանի կողմից 5-րդ կետում ներկայացված առաջարկության կապակցությամբ նշվեց, որ Հանձնաժողովի անդամների բացակայությունները կարող են պայմանավորված

լինել մի շարք օբյեկտիվ հանգամանքներով, որոնք կարող են շարունակական լինել: Ուստի այս առումով նրա կարծիքով ճիշտ կլինի, որ կարգավորում տրվի Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի՝ հաստատված ցանկով փոխարինող ունենալու հարցին:

Շ. Բարսեղյանի կողմից կարևորվեց նաև Հանրապետական կոլեկտիվ նոր պայմանագրի կնքման շրջանակներում Հանձնաժողովի աշխատակարգի վերանայման հարցը՝ այս գործընթացներում կարևորելով Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությունն ստանալու հարցը:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ առաջարկությունների 7-րդ կետի կապակցությամբ Ժ. Թորոսյանի կողմից հնչեցված տեսակետն ընդունելի է: Ինչ վերաբերում է Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի՝ հաստատված ցանկով փոխարինող ունենալուն՝ Հանձնաժողովի նախագահի կարծիքով ամեն դեպքում անհրաժեշտ է նշված հարցին կարգավորում տալ՝ միաժամանակ մոնիթորինգի ենթարկելով Հանձնաժողովի անդամների մասնակցությունը նիստերին, և, եթե Հանձնաժողովի նույն անդամը մի քանի նիստերի չի մասնակցում քննարկվի նրան փոխարինող նշանակելու հարցը:

Շ. Բարսեղյանի կողմից բարձրացված հարցի առնչությամբ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության Հայաստանում ազգային համակարգողի հետ քննարկման ժամանակ վերջինիս կողմից նշվել է, որ եթե վերևում բարձրացված հարցերի առնչությամբ լինի ԱՄԿ-ի աջակցության անհրաժեշտությունը, ապա Հանձնաժողովը կարող է դիմել և ստանալ ԱՄԿ-ի փորձագիտական աջակցությունը:

Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց Հանրապետական կոլեկտիվ նոր պայմանագրի մշակման, Հանձնաժողովի աշխատակարգի վերանայման և լրամշակման հարցերով Հանձնաժողովը դիմի ԱՄԿ-ին՝ վերջինիս կողմից փորձագիտական աջակցություն ստանալու համար: Առաջարկվեց նաև, որ Հանձնաժողովի հաջորդ նիստում աշխատանքային խմբի կողմից արդեն ներկայացվի նաև Հանրապետական կոլեկտիվ նոր պայմանագրի նախագծի նախնական տարբերակը: Ներկայացված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր ադամների կողմից:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը ***որոշեց.***

Հանրապետական կոլեկտիվ նոր պայմանագրի մշակման, Հանձնաժողովի աշխատակարգի վերանայման և լրամշակման հարցերով դիմել ԱՄԿ-ին՝ վերջինիս կողմից վերոնշյալ գործընթացների հետ կապված փորձագիտական աջակցություն ստանալու համար:

<u>2.</u> «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ Ռ. Պեպանյանը:

Նշվեց, որ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը

պայմանավորված է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) կիրարկման ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծման, աշխատաշուկայում անմրցունակ անձանց իրավունքների շրջանակն առավել հստակեցնելու անհրաժեշտությամբ:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրառման ընթացքում վեր են հանվել մի շարք անճշտություններ և բացթողումներ, որոնք շտկման կարիք ունեն: Նշվեց, որ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է.

- սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրում ընդգրկվելու ժամանակահատվածում անձի զբաղվածությունը համարել ժամանակավոր, որի արդյունքում կկասեցվի նրա գործազուրկի կարգավիճակը և ծրագրի ավարտից հետո հնարավորություն կընձեռվի օգտվել օրենքի 23-րդ հոդվածով սահմանված այլ իրավունքներից.
- կազմակերպությունների համար քվոտայի պահանջի առաջացման հիմք ընդունել տվյալ հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ), իսկ տվյալ տարում նոր ստեղծված կազմակերպությունների համար՝ ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ կազմակերպության աշխատողների միջին տարեկան թվաքանակը, որը պետք է լինի 100 և ավելի՝ բացառությամբ այն կազմակերպությունների, որոնք ստեղծվել են տվյալ տարվա դեկտեմբեր ամսին: Վերջիններիս կողմից քվոտայի պահաջի կատարման համար հիմք է ընդունվում տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմակերպությունում առկա աշխատողների թվաքանակը: Նախագծով տրվում է նաև կազմակերպությունների աշխատողների միջին տարեկան թվաքանակի հաշվարկման մեխանիզմները.
- գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման պետական ծրագիրը վերանվանել՝ որպես գործատուներին այցելության ծախսերի համար դրամական օգնության (գործազրկության նպաստի) տրամադրման ծրագիր և այս ծրագրի անվանումը ամբողջապես համապատասխանեցնել ծրագրի հիմնական նպատակին և բովանդակությանը:

Նախատեսված են նաև որոշ խմբագրական շտկումներ:

Հանձնաժողովի անդամների կողմից «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և հարցեր չներկայացվեցին: Հանձնաժողովը ***որոշեց.***

«Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն ընդունել ի գիտություն:

<u>3.</u> «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում և քննարկում:

Օրակարգի 3-րդ հարցը ևս ներկայացրեց աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ Ռ. Պեպանյանը:

Նշվեց, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը պայմանավորված է 2014 թվականին վերոհիշյալ որոշմամբ հաստատված կարգերի կիրառման ընթացքում ծագած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետության մարզերում մեծ տարածում ունեն սեզոնային բնույթի աշխատանքները, հետևաբար «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում», «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում», «Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում» ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախագծով հնարավորություն է տրվում սեզոնային աշխատանքը կիրառել նշված ծրագրերում.
- նույն ծրագրերում նախագծով հնարավորություն է ընձեռվում շահառուների հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում շահառուի նախաձեռնությամբ լուծելու այն և մեկամսյա ժամկետում աշխատանքի անցնելու այլ գործատուի մոտ: Տվյալ պարագայում ծրագրերով նախատեսված գումարը շահառուի կողմից ենթակա է լինում վերադարձման միայն այլ գործատուի հետ կնքված պայմանագրի լուծման դեպքում.
- ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրման կարգում և գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրման կարգում բացակայում են նպատակային սոցիալական վճարներ կատարելու մասին կամ դրանց վճարները հաշվարկելու և փոխանցելու (գանձելու) պարտավորության մասին դրույթները, ինչը նախատեսվել է նախագծով.
- նախագծով առաջարկվում է ընդլայնել Փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության ծրագրով աշխատաշուկայում անմրցունակ անձանց տրվող աջակցության շրջանակները, մասնավորապես նախատեսվում է փոխհատուցել տարածքի վարձակալության արժեքի 50 տոկոսը, բայց ոչ ավելի, քան ամսական 25000 Հայաստանի Հանրապետության դրամը՝ մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով.
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրման կարգով ուղեկցողի համար ուղեկցողի կարիք ունեցող անձանց տրվում է աշխատավարձի փոխհատուցում, մինչդեռ նախագծով առաջարկվում է այն փոխարինել ուղեկցողի կարիք ունեցող անձանց ուղեկցող ունենալու համար ծախսերի փոխհատուցմամբ.
- սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման կարգում առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման աշխատանքների առանձնահատկություններով, մասնավորապես՝ հացահատիկի, կարտոֆիլի և մի շարք այլ մշակաբույսերի մշակման աշխատանքների զգալի մասը իրականացվում է գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով, որի դեպքում ծառայությունների մատուցման

ժամկետները և վարձատրության չափերը խիստ տարբերակվում են ձեռքով կատարված աշխատանքների համար պահանջվող ժամկետներից և վարձատրության չափերից: Նախագծով առաջարկվում է ծրագրի առավելագուն տևողությունը սահմանել 180 օրը.

✓ Ծրագրի շրջանակներում աշխատանքի ներգրավված յուրաքանչյուր վարձու աշխատողի համար, գործատու հանդիսացող հող օգտագործողին մեկ աշխատանքային օրվա համար տրվող երկու հազար դրամն առաջարկվում է փոխարինել երեք հազար դրամով,

✓ Ծրագրի շրջանակներում ներգրավված և քաղաքացիաիրավական պայմանագրով հող օգտագործողի համար տեխնիկայի միջոցով ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող անձին մատուցված ծառայությունների կամ կատարված աշխատանքների դիմաց վճարելու համար առաջարկվում է հող օգտագործողին տալ փոխհատուցում՝ մեկ աշխատանքային օրվա համար երկու հազար դրամի փոխարեն՝ մեկ ժամվա համար հինգ հազար դրամ:

Նախատեսված են նաև որոշ խմբագրական շտկումներ:

Այս հարցի շրջանակներում Շ. Բարսեղյանի կողմից նշվեց, որ զբաղվածության ոլորտում գործող ծրագրերը բավականին բարդ են, և վերջինիս կարծիքով գործատուների համար հատուկ ուսուցումների կարիք կա: Շ. Բարսեղյանի կողմից կարևորվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում գործատուների համար համապատասխան ուսուցումների կազմակերպումը:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ իսկապես կա վերևում բարձրացված խնդիրը: Ներկայումս ամենամեծ խնդիրը մարդկանց տեղեկացված չլինելն է: Քաղաքացիների մեծ մասը անտեղյակ է ծրագրերից: Հանձնաժողովի նախագահի կողմից նշվեց նաև, որ կա պայմանավորվածություն, որի համաձայն՝ մարզպետարանների նիստերի ժամանակ ներկայացվելու են զբաղվածության ոլորտում գործող ծրագրերը, որտեղ ներկա են լինելու նաև համայնքների ղեկավարները: Ա. Ասատրյանի կարծիքով անչափ կարևոր է, որ մարդիկ հասկանան և դիմեն այդ ծրագրերի համար:

Ս. Հարությունյանի կողմից այս հարցի շրջանակներում հարց բարձրացվեց զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի և մասնավորապես, գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության ծրագրի հետ կապված:

Խնդիրը վերաբերում էր այլ վայրում աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործազուրկին տրված ֆինանսական միջոցների վերադարձմանը գործազուրկի կողմից, եթե պայմանագիրը լուծվել է գործազուրկի նախաձեռնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո երկու տարվա ընթացքում:

Ըստ Ս. Հարությունյանի կարող են լինել դեպքեր, երբ գործազուրկի նախաձեռնությամբ պայմանագրի լուծումը կարող է պայմանավորված լինել մի շարք օբյեկտիվ հանգամանքներով: Ուստի անհրաժեշտ է սահմանել ծրագրերի շրջանակներում ֆինանսական միջոցների հետ վերադարձման հետ կապված բացառություններ:

Բարձրացված հարցի կապակցությամբ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ իսկապես խնդիրն առկա է, սակայն խնդրի կարգավորման համար անհրաժեշտ են օբյեկտիվ

չափորոշիչներ, հստակ սահմանված ընթացակարգեր և խնդիրը լրացուցիչ քննարկման կարիք ունի:

Է. Տարասյանի կողմից բարձրացված հարցի առնչությամբ նշվեց, որ հիմքերը պետք է սահմանվեն օրենքով:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից առաջարկվեց բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության և նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության կողմից ներայացվի առկա վիճակագրություն, լրացուցիչ տեղեկատվություն:

Ներկայացված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամների կողմից:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

3.1. *«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:*

3.2. *Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության ծրագրի շրջանակներում գործազուրկին տրված ֆինանսական միջոցների՝ վերջինիս կողմից վերադարձման հարցի վերաբերյալ (եթե պայմանագիրը լուծվել է գործազուրկի նախաձեռնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո երկու տարվա ընթացքում) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալությունը և նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունը ներայացնեն առկա վիճակագրություն, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն:*

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**